464 Ժողովուրդն ենք մենք՝ սուրբ արյամբ գնված,

1. Ժողովուրդն ենք մենք՝ սուրբ արյամբ գնված,
Մոտենանք Աստծո Գառին համարձակ,
Որ Գողգոթայում տառապանք տարավ,
Խաչվեց իմ և քո մեղքերի համար:

Արյան զորությամբ ունենք թողություն,
Արյան զորությամբ ունենք փրկություն,
Արյան զորությամբ էր, որ Գողգոթայում
Գառն Աստծո տարավ հաղթություն:

2. Մեր կյանքը փոխեց, Իրեն մոտեցրեց
Ու խաչի ճամփան Նա մեզ ցույց տվեց,
Որ նայենք Իրեն, հիշենք Գողգոթան,
Երբեք չհիշենք անցած հին ճամփան:

3. Անհուն փառք Իրեն՝ Աստծո Գառին,
Որ անգին արյամբ տվեց թողություն,
Մաքրեց մեղքերից ու ճերմակ արեց
Եվ էլ ավելի կյանք մեզ պարգևեց:

Արյան զորությամբ ունենք թողություն,
Արյան զորությամբ ունենք փրկություն,
Փառք և օրհնություն երգենք մեր Աստծուն,
Որ Իր Որդով տվեց մեզ հարություն: